Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 545 - Ա
որոշման

«ՄԱՐԶԱՀՐԱՊԱՐԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Քաղաքացիների առողջ ապրելակերպի, առողջության, ֆիզիկական ակտիվության պահպանման և զարգացման նպատակով նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքներում կառուցել մարզահրապարակներ:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի, Լոռու մարզի Սպիտակ և Սյունիքի մարզի Գորիս քաղաքներ, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	20,933,180 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի, Լոռու մարզի Սպիտակ և Սյունիքի մարզի Գորիս համայնքները և համայնքի բնակիչները
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2024 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2025 թվականի փետրվարի 14-ը
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Մուշ 2» թաղամասի բնակելի համալիրի բակային տարածքում կառուցվելու է մարզահրապարակ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2025 թվականի փետրվարի 14-ն ընկած ժամանակահատվածում՝ 6,468,940 դրամի չափով.

		2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ քաղաքի «Շվեյցարական թաղամաս»-ի տարածքում կառուցվելու է մարզահրապարակ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2025 թվականի փետրվարի 14-ն ընկած ժամանակահատվածում՝ 7,202,120 դրամի չափով. 3) Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Գորիս քաղաքի «Հաղթանակ»-ի այգու տարածքում կառուցվելու է մարզահրապարակ: Նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 19-ից մինչև 2025 թվականի փետրվարի 14-ն ընկած ժամանակահատվածում՝ 7,262,120 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Գյումրի, Սպիտակ և Գորիս քաղաքներում կառուցվող մարզահրապարակների գույքի ձեռքբերման, տեղափոխման և տեղադրման աշխատանքների իրականացում, ինչպես նաև տարածքների հարթեցման, ռետինե ծածկույթների տեղադրման, պտտաձողերի, զույգ զուգաձողերի, օձաձև մարզասարքերի, շվեդական պատերի, ուղղահայաց բազրիքների, կոր զուգաձողերի ամրակցման և մարզական գույքի տեղադրման աշխատանքներ՝ 20,933,180 դրամ չափով:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմ, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի աշխատակազմ
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

06.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ